

ըլուտը: Ընդօժվեայ հեռագիրները կըտրած են Նանկինները, միայն Ճամսիկայի գիծն ազատ է, ուստի եւ հարկաւ շատ պիտի լսենք ամերիկեան գինաց յաղթանակներ... Այսօր վաղը մեծ նաւամարտ մը կը սպասուի, քայց ոչ Կուզայի առջեւ, այլ եւ Մանիլա: Սպանիական հայրենասիրական խանդավառ ցոյցերուն կ'ընկերանայ ըլլոր եւրոպայի համակրութիւնն, ի քաց առեալ թերեւս՝ Անգղիան:

Գարրիա: Նոր պատերազմի լրերը՝ մոռացութեան դատապարտեցին Զուլայի ինդիոր: Վճռաբեկ ատեանը՝ դատաւարութեան ձեւակերպութեան մէջ թերութիւն մը գտնելով, ոչնչացուց առաջին վճիռը. քայց նշանակութենէ զուրկ է այս պարագան, քանի որ Մայիս 23—24ին պիտի կրկնուի դատաստանն ի Վէրսայ: Տեսնենք թէ հրեայ Լէօվ (վճռաբեկ ատենի նախագահ) այս անգամ ինչ պատժառ պիտի զտնէ: Նոյն իսկ Դրէֆֆուսի կողմակիցներն իրենց հակակրօնները սկսան ցոյց տալ՝ այս դատաւարութեան կրկնութեան պատճառ եղողներուն. վասն զի որպէս ինդիոր կ'երկարի, նոյնչափ մտքերը կը զրգռուին: Առաջին վճռէն տարբեր արդիւնք չի սպասուիր. թէպէտ այս անգամ՝ Զուլան երեք փաստարան կ'ընտրէ եւ 128 վկայ: Լրագիրներն ալ իրենց թմբուկները սկսան զարնել, այս անգամ՝ „*Awrote*“ ին դերը կը կատարէ „*Siecle*“, որ կ'ուզէ կարկատեալ սուտերով „*fin de siecle*“ դատաստան մը յառաջ բերել. „յոյս ոչ ամաչեցուցանէ“, կ'ըսէ ծանօթ առածը:

Աւստրիա-Հռուզարիա: Խորհրդարանը կը շարունակուի, եւ ոչ այսչափ կեանք կը մարգարէացուէր Կոմս Թունի: Այսօր Ալիզ Լիխտէնշտայնի (հակահայայ) երկայն ճառախօսութիւնը նոյն իսկ Զուլներու կողմանէ նկատողութեան առնուեցաւ: Եթէ այսպիսի պատրաստուած ծրագիրներով հրապարակ ելլէր գերմանական տարրը, շատոնց արդէն վերցումը կ'ըլլար Բաղնիքի օրինադրութիւնը, եւ խորհրդարանի մասնաժողովին կողմանէ կը պատրաստուէր օրէնք մը եւ ինդիոր կը փակուէր:

Անգլիա: Վերջացաւ Սուդանի խնդիրն ալ՝ անգղիական - եգիպտական զի-

նոց յաջողութեամբ: Կիչէներ զօրավարին յաղթութիւնը՝ խորտակեց ի սպառ Մահմուտ Էմիրին դերվիշական քանակը: Չորս հազար կը հաշուի վերջիններուն կորուստը: Ոչ որ կրնայ գուշակել թէ այս մասնական պատերազմներէն ընդհանուր հրդեհ մը պիտի չծագի. վասն զի՝ եթէ ստույգ է տարածուած լուրը, թէ որչափ Անգլիա այս կողմերը կը տիրէ, նոյնչափ կը զրգռէ գոաղըրիա եւ գլխասաստան, այն ատեն հարկ է մրրիկ մ'ենլէ:

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ԱՌՍՈՒՄՆԱԿԱՆ

1848—1898 (պատկերաբար). 130:

ՀնէԳՐԱԿԱՆ — Ակնարկ մը հայ նազարութեան վրայ. 133:

ՀՆԱՌՈՍՄԱՆ — Ա. Նախակիւնեան-Հաթեան արձանագրութեամբ երկու կնիք: — Բ. Յունարէն եւ լատիներէն երկու արձանագրութիւն: — Գ. Աւետարան մը, կրկնագիր. 139:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Ներսիսի Ենոքեան «Երեսու որդի». 140:

ԼԵՋՈՒՐԱՄՆԱԿԱՆ — Արդի լեզուագիտութիւնը.

144: — Եւրոպիոյ Հայոց գաւառաբարբառը. 146:

ՄԱՏԵՆԱՌՈՍՄԱՆ — «Եղբայրական օգնութիւն».

147: — Gli Armeni e Zeiton երկու Հատոր. 151:

ԱՅԼԵՆԱՅԵՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ. 151:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐ ԺԱՂՆԵՓՈՒՆ. 1. Գրականական ֆորդ: — 2. Հարստութեան աղբիւրները կ'օտարացուին: — 3. Ըսիմե՛լ թէ սքիսե՛լ: — 4. Նուէր մը: — 5. Անկոչ խրատու մը: — 6. Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը: — 7. Դիտողութիւն մը: — 8. Հետաքրքրական երկու նիստ: — 9. Զ. Պարոնեանի ժառանգները կը փնտրուին: — Օգտակար գիտելիքներ. 156:

ԲԱՂԱԲԱՅԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 159:

ՀՐԱՏԱՐԱՎՈՒՆ ԵՒ ՊԱՏԱՆԱՆԱՅԻՆ ԽՍՐՈՒՄԻՐ

Հ. ԲԱՓԱՅԵԼ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԲԱՐԵՆԱՆ ԶԳԱՐԱՆ.